ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«24» հուլիսի 2020թ. N 61-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԴՈՆՑԻ ՓՈՂՈՑԻ N 19/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆ ԳՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 885-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8-րդ ու 11-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հանրային ծառայողներին բնակարանով ապահովման նպատակով Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 19/8 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան գնելու ցանկություն ունեցող պետական ծառայողների կողմից ներկայացվող դիմում-հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել գերատեսչությունների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացվող գերատեսչական տեղեկանքի ձևը՝ համաձայն 2 հավելվածի:

3. Սույն հրամանի 1-ին կետում նշված դիմում-հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի օգոստոսի 14-ը:

4. Սույն հրամանի 2-րդ կետում նշված գերատեսչական տեղեկանքների ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի օգոստոսի 20-ը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական կայքում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

7/24/2020

X

ԱՐՄԵՆ ՂՈՒԼԱՐՅԱՆ

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Արմեն ՂՈՒԼԱՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2020 թվականի հուլիսի 24-ի N 61-Ա հրամանի

_____ գլխավոր քարտուղար (աշխատակազմի ղեկավար)
(գերատեսչության անվանումը)

պարոն/տիկին _____ - ին
(գլխավոր քարտուղարի (աշխատակազմի ղեկավարի) անուն, ազգանուն)

_____
(ծառայողի զբաղեցրած պաշտոնը)

_____ - ից
(դիմում-հայտ ներկայացնողի անուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

Հանրային ծառայողներին բնակարանով ապահովման նպատակով Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնցի փողոցի N 19/8 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան գնելու

Ծառայողի անունը, ազգանունը և հայրանունը	Ծառայողի ընտանիքի կազմը	Ծառայողի անձնագրային տվյալները	Ծառայողի էլեկտրոնային հասցեն	Ծառայողի հեռախոսահամարը	Ծառայողի կողմից ակնկալվող բնակարանների սենյակների թիվը

Սույն դիմում-հայտին կից ներկայացնում եմ՝

1. ծառայողի և նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ կազմված ____ էջից.
2. ամուսնության, ամուսնալուծության, հայրության ճանաչման վկայականների պատճենները՝ կազմված ____ էջից.

3. տեղեկանք ՀՀ կադաստրի կոմիտեից՝ ծառայողի, նրա ամուսնու և մինչև 18 տարեկան զավակի անվամբ ՀՀ տարածքում սեփականության իրավունքով պատկանող (բացառությամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող) բնակարանի (բնակելի տան) առկայության մասին.

Սույն դիմում-հայտով հայտնում եմ իմ ցանկությունը՝ մասնակցելու Ծրագրի շրջանակներում բնակարանների ձեռքբերման գործընթացին, ծանոթացել եմ ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 885-Ն որոշմամբ սահմանված պայմաններին և պահանջների:

_____
(դիմում-հայտը ներկայացնելու ամսաթիվը)

_____
(դիմում-հայտը ներկայացնողի անուն, ազգանունը)

_____
(դիմում-հայտը ներկայացնողի ստորագրություն)

Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2020 թվականի հուլիսի 24-ի N 61-Ա հրամանի

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

_____
(Գերատեսչության անվանումը)

Հանրային ծառայողներին բնակարանով ապահովման նպատակով բնակարան գնելու պայմաններին բավարարող դիմումատուների վերաբերյալ

Աղյուսակ 1:

Բնակարան գնելու դիմումատուների ընդհանուր թիվը՝ ըստ անձի	Դիմումատուների ընդհանուր թիվը՝ ըստ սենյակների		
	Երկու	Երեք	Չորս

Աղյուսակ 2:

Դիմումատուի անունը, ազգանունը և հայրանունը	Դիմումատուի ընտանիքի կազմը	Դիմումատուի պաշտոնը	Դիմումատուի աշխատանքի գտնվելու վայրը	Դիմումատուի անձնագրային տվյալներ	Դիմումատուի էլեկտրոնային հասցեն	Դիմումատուի հեռախոսահամարը	Դիմումատուի կողմից ակնկալվող բնակարանների սենյակների թիվը

Սույն տեղեկանքին կից ներկայացվում են դիմումատուների դիմում-հայտերը:

_____
(տեղեկանքը կազմելու ամսաթիվը)

_____
(Գերատեսչության գլխավոր քարտուղարի (աշխատակազմի ղեկավարի) անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.